ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Հովհաննես Թումանյանի կյանքին և գործին նվիրված ծավալուն գրականություն կա: Երախտապարտ ընթերցողի տրամադրության տակ են մեծ գրողի կենսագրության էջերը բացող բազում հրապարակումներ, հուշագրություններ և վկայություններ[1]: Գրողի ստեղծագործական ժառանգությունն ուսումնասիրված է թե՛ որպես միասնական համակարգ՝ գրական-մշակութային առանձնահատուկ մի երևույթ[2], թե՛ ըստ տարբեր տեսանկյունների և գրական ժանրերի[3]: Հովհ. Թումանյանի անզուգական դերը հայ գրականության մեջ վաղուց արդեն անվիճարկելի, բացարձակ ճշմարտություն է. վերջինիս ամենից հակիրճ ձևակերպումը, թերևս, Պարույր Սևակինն է՝ «մեր գրականության մեծերի մեծը»[4]: Այդուհանդերձ, հերթական անգամ դիմելով Հովհ. Թումանյանի երկերին, համարձակվելով երկխոսության մեջ մտնել տակավին հարյուր տարի առաջ դեռ ողջ հանճարի հետ, հասկանում ենք, թե որքա՛ն վատ գիտենք նրա ստեղծած մտաբանական զարմանահրաշ

[1] Տե՛ս **Ն. Թումանյան**, Հուշեր և զրույցներ, Եր., 2009, էջ 291, **նույնի՝** Հովհ. Թումանյան. մանկություն և պատանեկություն, Եր., 1955, **Ա. Ինճիկյան**, Հովհաննես Թումանյան, Եր., 1969, «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., 2009, **Լ. Հախվերդյան**, Թումանյանը և իր ժամանակը, Եր., 1995, **Ստ. Զորյան**, Իմ Թումանյանը, Եր., 1969, **Գ. Մահարի**, Այս հմուտ, հանճարեղ Լոռեցին, Եր., 1971, «Թումանյանի ընտանիքի նամականին», երկրորդ, լրաց. հրատ., Եր., 2009:

[2] Տե՛ս **Փ. Վարդազարյան**, Վշտի և թախծի երգիչ Հովհաննես Թումանյան, Թիֆլիս, 1905, **Ա. Տերտերեան**, Յովհաննէս Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն, Վաղարշապատ, 1911, **Մ. Մ. Մկրյան**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1980, **Էդ. Զրբաշյան**, Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, Եր., 1988, **Լ. Հախվերդյան**, Թումանյանի աշխարհը, Եր., 1966:

[3] Տե՛ս **Էդ. Զրբաշյան**, Թումանյանի բալլադները, Եր., 1969, **նույնի՝** Թումանյանի պոեմները, երկրորդ, վերամշ. հրատ., Եր., 1986, **Ռ. Վարդանյան**, Թումանյանի պատմվածքները, Եր., 1977, **Ա. Մ. Վարդանյան**, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Եր., 1986, **Ս. Ա. Մելքոնյան**, Հովհ. Թումանյանը և արևելահայ գեղարվեստական գրականության լեզուն, Եր., 1986, **Մ. Զանփոլադյան**, Թումանյանը և ժողովրդական էպոսը, Եր., 1969, **Ա. Կ. Եղիազարյան**, Թումանյանի պոետիկան և նրա ժողովրդական ակունքները, Եր., 1990:

[4] **Պ. Սևակ**, Թումանյանի հետ // **Պ. Սևակ**, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 5, Եր., 1974, էջ 356:

կառույցը, որքա՛ն անսպառ է նրա կերտած իրողությունների, կերպարների, պատկերների, հույզերի և հենց իր իսկ խոհերի աշխարհը:

Հովհաննես Թումանյանի հայագիտական հայացքների էությունը պայմանավորված է, ամենից առաջ, նրան ներհատուկ հայկականությամբ: Հայոց բնաշխարհը և հայությունն ինքը՝ հայ մարդու հոգին ու շունչը, նիստուկացը, ուրախությունն ու դառնությունը, անցյալի ապրումն ու ապագայի հույսը, բանաստեղծի կայացման հիմքն ու հենքն են, նրա «եսի» առանցքը: «Հայոց լեռներում»-ը ոչ թե սոսկ բառակապակցություն է կամ աշխարհագրական բնութագրում, այլ բանաստեղծի ներաշխարհի՝ մտքի և հույզի արտապատկերը: Եվ պատահական չէ, որ հատկապես Հովհ. Թումանյանն ավելի, քան որևէ հայ գրող, իրավունք է ունեցել ասելու, թե հայոց աշխարհից դուրս դու կարող ես լինել «հայ բանաստեղծ», բայց երբեք չես դառնա «հայոց բանաստեղծ»[5]: Քննադատ վերլուծաբաններից առաջինն Արսեն Տերտերյանն է բացահայտել բանաստեղծի ստեղծագործության այդ էութենական առանձնահատկությունը. «Հայրենի եզերքին բանաստեղծը անձնական երջանկութիւն է որոնում *համայնօրէն:* Նա ստեղծագործում է բոլորի հետ և բոլորի համար.... Բանաստեղծը կտրված չէ կեանքից, այլ կազմում է այդ կեանքի մի անբաժանելի մասնիկը: Նրա կենսահայեցողութեան մէջ ինքը և իւր խմբակցութիւնը մի են, իրար հասկացող, իրարով շնչող և ապրող»[6]: Հովհ. Թումանյանի հայկականության իր զգացողության մասին սքանչելի է ասել Ստեփան Զորյանը. «Նրա ստեղծագործության մեջ ես միշտ զգում եմ հայրենի հարազատություն, հայրենի երկրի ու բնության պատկերը, հայրենի դաշտերի ու լեռների բուրմունքը, հայ ժողովրդի ապրած խոր վշտերն ու կարճատև խնդությունները և, վերջապես, մեր մայրենի լեզվի պարզ, վճիտ ու տիրական ձայնը, որն ինձ հիշեցնում է մեր լեռներից իջնող և իր շուրջը հաճելի զովություն ու կենդանություն առաջացնող շողշողուն մի վտակ»[7]:

Մեր մեծ բանաստեղծի արարչագործության ակունքները ժողովրդական բանահյուսության մեջ են, այստեղից է նաև հարուստ բառապաշարը, առածների ու ասացվածքների, առակների ու ավանդությունների զարմանահրաշ իմացությունը, հեքիաթների այնքան հմուտ մշակումը, որ դրանք թվում են անձեռակերտ, պարզիպարզո՝ ժողովրդի շուրթերից արված գրառումներ[8]: Տեսնենք, թե ինչ է ասում տակավին

---

[5] **Հովհ. Թումանյան**, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները // Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Եր., 1999, էջ 85: Հովհաննես Թումանյանից բոլոր մեջբերումները ԵԼԺ-ից են, հետայսու տրվում են տեքստում:

[6] **Ա. Տէրտէրեան**, Յովհաննէս Թումանեան: Հայրենի եզերքի քնարերգուն, էջ 51:

[7] **Ստ. Զորյան**, Իմ Թումանյանը, էջ 31:

[8] Իհարկե, Հովհ. Թումանյանի հեքիաթները գեղարվեստական մշակման արգասիք են, և ինքն էլ դրա մասին քանիցս շեշտել է հրապարակախոսական ելույթներում և նամակներում: Այնպես որ լիովին համերաշխ եմ հետևյալ կարծիքին. «Ժողովրդական հեքիաթը մշակելիս՝ Հովհ. Թումանյանը բանահյուսական հում նյութն անցկացրել է իր գեղարվեստական անհատականության, իր հոգու միջոցով և ստեղծել նոր, ինքնատիպ ու ինքնու-

պատանի Հովհաննեսն իր առաջին գրավոր խոսքի մեջ, որ մամուլում տպագրվել է 1887 թ. օգոստոսի 15-ին. «Տարաբախտաբար մեր ժողովուրդը դեռևս ինքն է ասում ու ինքն է լսում իրեն «պապական խոսքը»՝ ավանդությունը: Գյուղացի պատմախոսի՝ ավանդապահ ծերուկի ձայնը այդպես էլ դուրս չեկավ իրեն օդայի չորս մրոտ պատերից» (6, էջ 7): Եվ ուրեմն, անելիքը հստակ է. «Ցանկանում ենք սրտագին, որ «ասողին ճշմարիտ լսող լինի»: Ժողովուրդը շատ նյութ ունի տալու ամեն մեկին» (նույն տեղում): Ինքն էլ հենց դարձավ ժողովրդի իմաստուն խոսքի՝ ամենասեղմ ու խորախորհուրդ հայկականության թե՛ «ճշմարիտ լսողը», թե՛ ավանդապահ պատգամախոսը:

Հովհաննես Թումանյանի մի շարք բանաստեղծություններ, պատմվածքներ և հրապարակախոսական հոդվածներ յուրատեսակ հայագիտական ակնարկներ են, երբեմն՝ զուտ քնարական («Հայոց վիշտը», «Մեր ուխտը», «Մեր նախորդներին», «Հայ ուխտավորին», «Հիշողություն հայրենիքից», «Հայրենիքիս հետ»), երբեմն՝ վերլուծական («Հայի ոգին», «Խորհրդածություն հայկական հարցի վրա», «Հայի զարմանքը», «....Հայոց վարժուհի»), երբեմն՝ երգիծական բնույթի («Հայ վաճառական», «Հայի տրտունջը», «Հայի ցավը», «Գրական «Մազանդա»», «Կտակ»):

Հայկականությունը ներհյուսված է բանաստեղծի բուն լեզվի, գործածած ոճական ձևերի մեջ: Ահավասիկ. «Իմ միտքն էլ, ավա՛ղ, շըրջում է մոլոր // Հայի հալածված պանդուխտի նըման» (4, էջ 62), «Ահա երկինքն իմ հայրենի – // Հայի սրտի նման պարզ» (1, էջ 61), «Մի շունչ, մի խորհուրդ, մեծ, հըրաշալի, // Խառնըված հայոց մեր խորունկ հոգուն» (1, էջ 210), «Սահակ ու Մեսրոպ, և շատ պանծալիք //.... Հոյակապ սյուներ հայության ոգու» (1, էջ 264), «Հայոց վշտի մեծ ծովի մեջ // Տառապում է իմ հոգին» (1, էջ 200), «Հայի գիշե՛ր, հայի գիշե՛ր, // Ցավի անդունդ անհատակ» (1, էջ 77):

Անդրադառնալով իր ստեղծագործության քննադատական գնահատման առաջին փորձերից մեկին[9], Հովհ. Թումանյանը դրա հեղինակին ուղղված նամակում փաստորեն առիթ է ունեցել մեզ հաղորդելու ուշագրավ մի ինքնաբնութագրում. «Ընդհանուր առմամբ դու բանաստեղծին նկատել ու ճանաչել ես շատ ճիշտ, որ նա իր ժողովրդի թշվառության երգիչն է, թախիծի, վշտի բանաստեղծ, որ այդ թախիծը, այդ տխրությունը ունի զանազան աղբյուրներ, բայց այդ բոլորը մի տեղից են գալիս ու մի տեղ են գնում և այդ է մեր հայկական կյանքը, հայկական աշխարհքը: Գուցե այդ լինի իմ գլխավոր արժանիքը.... Ամենից ա-

---

րույն գեղարվեստական երկ, որն ուժեղ է հենց այս «երկակիությամբ»՝ երկի հիմքում ընկած ժողովրդական տարերքով և հեղինակի գեղարվեստական մտածողության դրոշմով» (**Ա. Մ. Վարդանյան**, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, էջ 68):

[9] Դա Փիլիպոս Վարդազարյանի «Վշտի ու թախծի երգիչ Հովհաննես Թումանյան (քննադատական փորձ)» (Թիֆլիս, 1905) գրքույկն է: Հովհ. Թումանյանը նախապես ծանոթացել է ձեռագրին և 1904 թ. մի քանի նամակում քննարկել աշխատանքը, որոշ խորհուրդներ տվել հեղինակին:

ռաջ ամեն բանաստեղծ իր ժողովրդի սիրտը պետք է լինի» (9, էջ 448): Այլ առիթով նույն հեղինակին՝ իր մտերիմ ընկերոջն ու հովանավորին՝ Փիլիպոս Վարդազարյանին, հիշեցնելով Հայնրիխ Հայնեի այն միտքը, թե բանաստեղծի սիրտն աշխարհի կենտրոնն է, Հովհ. Թումանյանը շարունակում է. «Վա՛յ մեր աշխարհի բանաստեղծին ու նրա սրտին, և, հիրավի, իմ սրտի վրա չափազանց սաստիկ ծանրանում են մեր աշխարքի ամեն ցավերը, գուցե այդ արդեն ապացույց է, որ ես էլ եմ բանաստեղծ....» (9, էջ 289 – 290): Եվ ասվածի, այսինքն՝ անհատի և ազգի ինքնանույնացման, մտավորականի ազգային-հանրային գերագույն պատասխանատվության զգացումի ամենաստույգ մեկնաբանությունը՝ հաջորդ նամակում. «Խոր ու լայն զգում եմ, որ վշտոտ ազգը, տառապած ազգը շարժվում է իմ մեջ, ուզում է խոսել» (2, էջ 293):

Վերջապես՝ հայոց մեծ բանաստեղծն ինքը մարմնացյալ հայկականություն է: Զարմանալի չէ, որ նման կարծիք հայտնվում է թե՛ հաղորդակցման տպավորությամբ («տիպար հայ էր»[10]), թե՛ որպես համակողմանի վերլուծության ամփոփում[11]:

Հովհաննես Թումանյանի հանրաբանական հայացքների հիմքն անհատի և հանրության վարքուբարքի փոխադարձ պատճառակցման ըմբռնումն է՝ անհատն է ստեղծում հասարակություն, և վերջինս այնպիսին է, ինչպիսին մարդիկ են, միաժամանակ՝ անհատը ձևավորվում է հանրային որոշակի միջավայրում և կրում դրա առանձնահատկությունների կնիքը: Միևնույն ժամանակ, ինչպես հասուն անհատը, այնպես էլ հասարակությունը զրկված չէ կամքի ազատությունից, ուստի և պատասխանատու է իր արարքների համար՝ լավ կամ վատ, բարի կամ չար. «Բարքի խնդիրը մարդկային առաքինությունների խնդիրն է, հոգու, սրտի, խղճմտանքի մեծ խնդիրն է: Լավ ու վատ բարքիցն են ծնունդ առնում կյանքի մեջ բարիքն ու չարիքը թե առանձին անհատների, թե ազգերի և թե ընդհանուր աշխարհքի համար» (7, էջ 127):

Հետևաբար, ինչպես անհատի, այնպես էլ հանրության կյանքի բնականոն կազմակերպման, նրանց շահերի ներդաշնակման, հավաքականության ներուժն առավելագույնս բացահայտելու և արդյունավետ գործադրելու հիմնական պայմանը ինքնաճանաչումն է: Ինքը՝ մեծ գրողը, մշտապես խոսել է ինքնաճանաչման և դրա շնորհիվ ինքնակատարելագործման մասին: «Ամենադժվար բանը, որին ձգտում են մարդիկ՝ ինքն իրեն ճանաչելն է,– ասում է Հովհ. Թումանյանը:– Ճանաչի՛ր ինքդ քեզ: Եվ մարդը պետք է ճանաչի ինքն իրեն, իր ուժերը, կարգավորի իրեն և իմաստուն կերպով առաջնորդի, ուղղություն տա իրեն.... Մարդը ձգտում պիտի ունենա լավա-

---

[10] **Զորավար Անդրանիկ**, Վերհիշումներ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կյանքեն // «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Եր., 2009, էջ 550:

[11] «Նա ինքը, իբրև մարդ-անհատ, կարծեք թե մեր ամբողջ ժողովրդի ազգային բնավորության բոլոր գծերը ընդհանրացնող մի հոյակապ գեղարվեստական ստեղծագործություն է» (**Մ. Մկրյան**, Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Եր., 1980, էջ 295):

նալու, բարձրանալու: Միշտ պիտի ձգտել դեպի կատարյալը»[12]:

Ազգային անինքնաճանաչությանը, սեփական ազգային «եսին» անծանոթ մնալը, ըստ Հովհաննես Թումանյանի, «մեծ ցավ է», «ամոթալի մի դրություն»: Եվ այդ ցավը պատել է հայությանը. «Չգիտենք մենք ի՛նչ ենք եղել, ի՛նչ ենք արել, ինչո՛ւ և ինչպես, ի՛նչ օրով, ի՛նչ ճանապարհով ենք էստեղ հասել» (6, էջ 174): Դարձյալ՝ արձանագրելն անբավարար է, հարկավոր է գիտակցել այդ ամոթալի վիճակը և դրա անցանկալի հետևանքները. «Էսքան փորձություն ու տառապանք ունեցած մի ժողովրդի անվայել է անգիտանալ իր կյանքը ու ծփալ, տարուբերել ժամանակի ալեկոծության քմահաճույքին անձնատուր» (6, էջ 194): Իսկ ինչի՞ է հանգեցնում չիմացությունը թե՛ ամբողջ ազգային հանրույթին, թե՛ դրա առանձին անդամին: Սեփական պատմությունը, մշակույթը, լեզուն, հարազատ բնօրրանը չճանաչողը հնարավորություն չունի սթափ ինքնագնահատական ձևավորելու, ուստի և նա անխուսափելիորեն երկու ծայրահեղության է հասնում՝ կա՛մ ազգային պարծենկոտության, կա՛մ ազգային ինքնանվաստացման: Այս վերջին հոգեվիճակը Հովհ. Թումանյանը հատկապես անողոք ու տպավորիչ է բնութագրել. «Եվ ի՛նչ զարմանք, որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարհամարհի իր ցեղը, իր անունից կամաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղին վերաբերյալ ամեն ստորություն, և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշխարհքում ոչինչ չի հարգում սկսած իրենից» (6, էջ 174 – 175):

Բանաստեղծը՝ որպես հանրության առավել զգայուն անդամ, իրեն պարտավորված է զգում ոչ միայն դատողություններ անելու, այլև որոշակի գործողություններ ձեռնարկելու: «Ինչպես ֆիզիկական հիվանդությունները ունեն իրենց առանձնահատուկ հաստատ սիմպտոմը, ախտանշանը, էնպես էլ հասարակական-բարոյական հիվանդությունները ունեն իրենց ախտանշանը.... Սրա համար էլ եթե մի հասարակության մեջ վատ բարքեր են հայտնվում, որպես բարոյական անկման ախտանշաններ, նա պետք է կռվի դրանց դեմ և իր բարոյական առողջության վրա էլ հոգ տանի էնպես, ինչպես հոգ է տանելու իր ֆիզիկական առողջության վրա» (7, էջ 127, 128): Եվ Հովհաննես Թումանյանի համար սա ոչ թե վերացական եզրահանգում է, այլ կենսական դիրքորոշում. տակավին քսանմեկ տարեկանում բանաստեղծը շարադրել է իր պատկերացումները գրչի մարդու հանրային պարտավորությունների մասին, մասնավորապես՝ չարիքի դեմ պայքարի (1, էջ 55).

.... Բարկության հրով շնչիր չարի դեմ,
Որ թույնով, փոդով գահ է բարձրացել,
Եվ լուսավորիր, ցույց տուր ամբոխին,
Թե ինչ ընթացքով չարիք է գործել:

---

[12] **Ն. Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 151, 205:

Անձնային և ազգային ինքնաճանաչման պակասն է հարուցում հանրային կյանքի նման ձևախեղումները: Դրանցից մեկն էլ այն է, երբ մարդն իր տեղում չէ, քանի որ ունեցած գիտելիքներն ու հմտություններ-ը չեն համապատասխանում զբաղեցրած դիրքին, բայց ոչ պակաս «մեծ ցավ» է, որ դա լինում է ոչ թե պատահականություն կամ տվյալ անհատի կատարած սխալ ընտրության հետևանք, այլ ազգային-հանրային ձախավեր օրինաչափություն, համակեցության անկազմակերպվածության վկայություն: Որպես ֆելիետոն գրված «Հայի տրտունջը» այդ թեմային է նվիրված. տաղանդաշատ է պոետը, ուստի նրան դարձնում են.... գործակատար, դե, սա էլ խառնում է հաշիվները, անկարգ ու ցրված աշխատում, նմանապես՝ աչքի ընկած դերասանին դարձնում են.... բանկի ծառայող՝ դարձյալ ձախողում, և այսպես շարունակ: Եվ բնականաբար, մարդկանց տեղն ու դերը այսկերպ տնօրինողը (երևութական հավաքական կառավարիչը) միայն կարող է դժգոհել. «Չէ, մեզանում, աստված վկա, // Մի ընդունակ գործող չըկա» (1, էջ 162):

Ինքնաճանաչման պակասը և ինքնագնահատականի աղավաղումը կարող են հանգեցնել հանրային կյանքի կարգավորման համակարգային խաթարման, հասարակության անդամների ապակողմնորոշման, երբ իշխանության գլխին հայտնվում են ոչ թե սոսկ տվյալ դերակատարմանն անհամապատասխան մարդիկ, այլ խարդախ ստահակները: Բոլոր ժողովուրդների կյանքում քանիցս կրկնված այս իրողության մասին է հիշեցնում բանաստեղծը՝ որպես նախազգուշացում և կանխարգելում (1, էջ 36).

.... Ահա գետնաքարշ և չարախնդում
Խումբերըն անսիրտ մարդ-հրեշների
Վիստում են անվախ՝ հրապարակներում,
Իբրև առաջնորդ մարդոց մտքերի:

Ուրեմն, ազգային ինքնաճանաչումը ենթադրում է նաև սեփական թերությունների իմացություն, իսկ Հովհաննես Թումանյանը երբևէ չվարանեց բացահայտել դրանք՝ չվախենալով արժանանալ ազգային սնամեջ պարծենկոտությամբ տառապողների, «կույր, կեղծ, անխելք հայրենասիրության» (տե՛ս 6, էջ 46) կողմնակիցների ատելությանը: Իհարկե, այս հարցում ծայրահեղ կարծիքներ մշտապես եղել են և կան: Հովի. Թումանյանը փաստորեն շարունակում է իր նշանավոր գրչակից Ղևոնդ Ալիշանին, որը փորձում էր «համառ ազգասիրության» կողմնակիցներին, «կարծեցյալ ազգասիրաց» կողմնորոշել դեպի յուրատեսակ «ոսկի միջինը». «Ազգին պակսությունը պարտկել՝ խելացություն է, բայց պակսությունը չճանչնալ՝ մեծ անխելքություն.... Ազգին պակսությունները պետք է ատել, բայց զազգը պետք է սիրել և այնչափ ավելի, որ-

չափ որ պակսություն տեսնենք»[13]: Եվ երբ կարդում ենք Հովի. Թումանյանի դառնությամբ գրված տողերը հայերիս մեջ տարածված «չկամության ու չարակամության», մաղձոտ ատելության (տե՛ս 7, էջ 8), նախանձի և կեղծավորության (տե՛ս 6, էջ 150, 224; 10, էջ 36), սեփական լեզվի հանդեպ անհարգալից վերաբերմունքի և բացահայտ օտարամոլության (տե՛ս 6, էջ 226, 248), կուսակցականացված մամուլի պառակտիչ դերակատարման մասին (տե՛ս 6, էջ 208, 252; 8, էջ 507), երբ հանդիպում ենք հայ գրական, քաղաքական և եկեղեցական որոշ գործիչներին նրա տված սպանիչ որակումներին (տե՛ս 6, էջ 85 – 87, 160 – 168, 267; 7, 39 – 40, 64 – 75), հայոց հավաքական կամքից ու վարքից խորը դժգոհությանը (տե՛ս 6, էջ 50 – 53, 109 – 112; 9, էջ 294; 10, էջ 408), ապա մշտապես պետք է հիշենք մեծ բանաստեղծի հավատամքը՝ «Իմ զայրույթը լիքն է սիրով» (2, էջ 13) և «Տանել, ներել ու սիրել» (2, էջ 21): Եվ այդ հավատամքը դրսևորվում էր ամենուր՝ անձնական կյանքի առտնին խնդիրների կարգավորումից մինչև ազգամիջյան բախումների կանխարգելում և կողմերի հաշտեցում. պերճախոս է դստեր վկայությունը՝ «մեծ հաշտեցնող ու հուսադրող»[14]:

Իսկ թե որքա՜ն խորն է տառապել Հովհաննես Թումանյանը՝ հոգու և մտքի միջով անցկացնելով իր արձանագրած երևույթները, վկայում է 1902 թ. «Մեր նախորդներին» նշանավոր բանաստեղծությունը (1, էջ 188).

Երանի՜ էր ձեզ, գովված երգիչներ,
Դուք երգում էիք վաղ առավոտյան,
Երբոր երազներն ապրում էին դեռ,
Ոսկի երազներն հայի փրկության:

Ձեր թարմ երգերում կար մի հայրենիք,
Խրո՜խտ, վեհապա՜նծ, թեպետև գերի,
Եվ ձեր քընարի ձայներն երջանիկ՝
Լիքը հրճվանքով գալոց օրերի:

Ա՜խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև
Եվ մեր ըզգայուն սըրտերն իրեն հետ,
Ոսկի երազներ՝ միրաժի նման՝
Մեր անապատում չքացան անհետ:

Եվ մենք խորտակված մեր կյանքի ծեգից,
Անհույս ու դալուկ, ճակատներըս ցած,

---

[13] **Ղ. Ալիշան**, Ազգին պակսությանց կամ կատարելության վրա // Երկեր, Եր., 1981, էջ 170, 174:

[14] **Ն. Թումանյան**, Հուշեր և զրույցներ, էջ 51:

Ընկնում է քընար մեր մատաղ ձեռքից,
Ընկնում են սրրտից և՛ երգ, և՛ աստված:

Գրականագետներից շատերն են անդրադարձել այս բանաստեղծությանը, վերլուծել և հայտնել տարբեր կարծիքներ: Եվ դա պատահական չէ, քանի որ առերևույթ պարզ ու հասկանալի միտքը, կորուսյալ երազների հիշատակումը, անցյալի և ներկայի համեմատությամբ ծնված ափսոսանքի տրամադրությունը չեն սպառում բազմաշերտ այս կառույցը: Առավել խորքային բնութագրումը տվել է, թերևս, Հրանտ Թամրազյանը՝ տեսնելով դրա մեջ ստեղծագործող հայ մարդու հայկականության առավել սեղմ արտահայտությունը. «Իրար են միանում ազգային բախտի փիլիսոփայությունը, սոցիալական աղետներից և մարդու ճակատագրից ծնված տագնապները, խորհրդավոր ապրումները, իդեալների կորուստի զգացողությունը, հոգեբանական փոփոխության պատկերները, ստեղծվում է տարակույսների, տագնապների, երազների ու անկումների, ցավի հոսանքների մի ամբողջություն, ավելի ճիշտ՝ մի ալեկոծություն, որի մասին ամենից ավելի սպառիչ խոսել է ինքը՝ Թումանյանը»[15]:

Հովհաննես Թումանյանին անհանգստացնում էր հատկապես «հայ հասարակության ազգայնապես անգիտակից, մտայնապես հետամնաց ու հոգեպես թմրած վիճակը», քանի որ դա պարարտ հող էր ստեղծում պառակտիչ ելույթների, տարատեսակ «դոնոսչիկների» խժդժությունների, օրինավոր և պարկեշտ մարդկանց վարկաբեկման համար (տե՛ս 7, էջ 118): Դիտողունակ վարքաբանի սրատես աչքն այսպես արձանագրել է ազգային հավաքականության ներքին խոցելիությունը, որը դարձյալ հետևանք է անձնային ինքնաճանաչման պակասի և դրանից բխող գերբարձր ինքնագնահատականի. իրենք իրենց և միմյանց վատ ճանաչող մարդիկ չեն կարող նաև միմյանց ճիշտ արժեքավորել, արդարամիտ լինել մեկը մյուսի վարքը գնահատելիս: Պատահական չէ, կարծում եմ, որ այս երևույթի մասին Հովհաննես Թումանյանը հատկապես տագնապով է խոսել կաթողիկոսական մի ընտրության առթիվ մամուլում ծավալված բանավեճի ընթացքում: Անդրադառնալով տարբեր թեկնածուների կերպարներին, սրանց դրվատող կամ պարսավող անձանց ելույթներին, բանաստեղծը խոստովանում է, թե իրեն «շատ ծանր ու տխուր մտքեր են պաշարում»: Եվ բանը ոչ այնքան արժանի թեկնածու ընտրելն է, որքան հարկադրական եզրակացությունը, թե «լավ մարդիկ չեն երևում մեր կյանքում կամ շատ քիչ են երևում, իսկ վատերը շատ» (6, էջ 346): Իհարկե, շատ ծանոթ, կրկնվող իրավիճակ է. լավ, արժանավոր մարդիկ չեն հայտնվում հրապարակում, իրենք իրենց չեն մատուցում հանրությանը, չեն հայցում իշխանություն և պաշ-

[15] **Հր. Թամազյան**, Բանաստեղծը և ճակատագիրը, Եր., 1978, էջ 188:

տոն, ուստի և ասպարեզը մնում է այդ վատերին: «Եվ ահա նրանք հրապարակ են իջնում խոսելու կամ գործ տեսնելու, աշխարհքի դիմաց հանդիսավոր երդվում են ճշմարտության, անաչառության, վեհ գաղափարների անունով ու խաբում են լսողներին, մոլորեցնում են անաստված կերպով» (6, էջ 346): Ի՞նչն է վնասակար ազգային համերաշխության համար. փոխանակ մրցակցային ազնիվ պայքարում հաղթելու և հանրության քվեն շահելու, ամեն ինչ արվում է դիմացինին վարկաբեկելու, տապալելու համար, իսկ առավել վնասակարն այսօրինակ վարվելակերպի բարոյական արձագանքն է, արժեքային համակարգի կաթվածահարումը: Այնպես որ, միանգամայն հիմնավոր է Հովհաննես Թումանյանի ահազանգը. «Եվ տապալում ու խորտակում են, բայց ոչ թե իրենց հակառակորդին, այլ հավատը մարդկանց մեջ, հավատը դեպի մարդն ու մարդու ազնիվ խոսքը, դեպի գործիչն ու գործը, դեպի գրվածքն ու գրողը: Եվ այս հազար անգամ ավելի լուրջ խնդիր է, քան թե ամեն մի կաթողիկոսական խնդիր» (6, էջ 346):

Ներազգային փոխհարաբերությունների նման ձևախախտման միակ հնարավոր շտկումը, հանրային կյանքի խելամիտ և արդյունավետ կարգավորումն այն է, որ ամեն ոք հայտնվի իրեն արժանի տեղում և չփորձի անօրեն կերպով գրավել ավելի արժանավորի տեղը: Սա Հովհաննես Թումանյանը ձևակերպել է անվերապահ հրամայականի ձևով. «Պետք է լռեն վերջապես բոլոր նրանք, որոնք խոսել են ու խոսում են և՛ ժողովրդի անունից, և՛ գրականության, և՛ պատմության, և՛ գիտության, միմիայն մարդկանց աչքերին թոզ փչելու համար, կուրացնելու ու իրենց ետևից տանելու համար, իրենց համար առաջնորդողի դիրք ու աթոռ ստեղծելու համար, և հանդես պետք է գան ու խոսեն նրանք, որոնք երկար տքնությամբ ու ճոխությամբ ուսումնասիրել ու սիրել են իրենց խոսքի առարկան և չեն գալիս դիրք ու աթոռ գրավելու հավակնությամբ, այլ գիտությանն ու գեղարվեստին ծառայելու պատրաստակամությամբ» (7, էջ 139): Եվ, իհարկե, այսօրինակ հեղաշրջումը, արմատական վերակառուցումը կարող են տեղի ունենալ արժանավոր մարդկանց հանրային ճանաչմամբ և պատշաճ գնահատմամբ: Իրողության հիմնովին իմացությամբ հանդերձ՝ բանաստեղծն անսահմանորեն հավատում էր հայոց հավաքական ներուժին, վստահաբար էր նայում գալիքին, տեսնում նոր սերնդի բարերար գալուստը: 1913 թ. նոյեմբերի 7-ին Հայ գրողների ընկերության երեկույթների երկրորդ շրջանի բացման խոսքում Հովհաննես Թումանյանը հորդորում է «զվարթ գիտակցությամբ» սկսել գրական երեկոները, «պայծառ հայացքով» նայել հայության և հայ գրականության ապագային. «Մենք հավատում ենք, որ մեր թիկունքն ամրացած է գործիչների նոր սերունդով, որ գալիս են ավելի մեծ բազմությամբ, ավելի պատրաստված ու ավելի եռանդով» (7, էջ 107):

Հայոց համակեցության արդարացի և արդյունավետ կազմակերպ-

ման, կառավարման հինավուրց՝ «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում», սկզբունքի համաձայն՝ ազգովի համակամորեն գործելու հիմնական պայմանը վերստին ինքնաճանաչումն է՝ որպես անհատ և որպես ազգային հավաքականության անդամ, համազգային մշակույթի ժառանգորդ և հետևորդ: Հատկապես համազգային մշակութային վերելքի ակնկալիքն է 1916 թ. հոկտեմբերի 14-ին Թիֆլիսի երաժշտական դպրոցում Հովհաննես Թումանյանի արտասանած ելույթի պաթոսը. «Ամեն մի ժողովրդի համար բնության ու մարդկային ճշմարիտ ծանոթության հետ միասին, իր ազգային ինքնաճանաչողությունն է իր ճանապարհի մթնում լույս տվող լապտերը: Մութի մեջ խարխափողը միշտ ենթակա է գլխի վրա զանազան անդունդների մեջ գլորվելու վտանգին: Եվ մի անդունդից դուրս գալուց հետո դեռ չի նշանակիլ, թե այժմ ուղիղ կերթա» (7, էջ 280 – 281): Այս տպավորիչ համեմատությունը, բնականաբար, անտարբեր չէր թողնելու մտածող ունկնդիրներին: Ուստի և, ազգային ճանաչողությունը համարելով հայոց մշակութային վերելքի հիմք, Հովհ. Թումանյանը հորդորում է մտավորականներին գործուն մասնակցել այդ «կուլտուրական-ազգային ուժեղ շարժմանը», մասնավորապես՝ այդ նպատակին ծառայեցնել գրական երեկոները և հրապարակային դասախոսությունները: Մեկ անգամ ևս արտահայտելով իր համոզմունքը հրապարակային խոսքի մոգական ուժի մասին՝ նա կոչ է անում «խոսքի ընդունակ մարդկանց» խոսել ժողովրդի հետ, ուղղորդել դեպի հոգևոր, մտավոր, բարոյական վերելք: «Խոսեն՝ ոչ թե ճառեր՝ նրանց զգացմունքները հուզելու համար, այլ խաղաղ, օբյեկտիվ, գիտական, քննադատական լուրջ վերլուծություններով ու խորասուզումներով տանեն դեպի ազգային պայծառ ինքնաճանաչությունը և ընդհանուր զարգացման ընդարձակ հորիզոններ բաց անեն» (7, էջ 282):

Հրապարակային բոլոր ելույթներում Հովհաննես Թումանյանը մշտապես հույժ կարևորել է սեփական պատմության, հատկապես հայոց նախնիների ստեղծած մշակութային արժեքների իմացությունը: Երբ 1914 թ. մարտի 17-ին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիսի ժողովարանում նախատեսում էր կազմակերպել երեկույթ, որտեղ նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը դասախոսություն էր կարդալու, և ցուցադրվելու էին հայկական ճարտարապետության նմուշներ, Հովհ. Թումանյանը իր խմբագրած «Հորիզոն» թերթի մարտի 5-ի հոդվածում դարձյալ կարևորում է ազգային ինքնաճանաչման հանգամանքը և դրա հիման վրա ազգային առողջ հպարտության ձևավորումը. «Թող գան հայերը, տեսնեն ու համոզվին, որ իրենք միշտ էն ժողովուրդը չեն եղել, ինչ որ հանդիսանում են էսօր, տեսնեն, թե ի՛նչ են ստեղծել ու ի՛նչ են եղել անցյալում, որ հոգեպես բարձրանան ու լցվին հավատով դեպի իրենց ազգային ապագան» (7, էջ 137): Հիրավի, անցյալի իմացությունը ոչ միայն հիմքն է համազգային սթափ ինքնագնահատման, այլև ներկայի ոչ պատվաբեր վիճակի գիտակցման, ուստի և

նոր ապագա կերտելու վճռականության:

Հայ գրերի 1500-ամյակը և տպագրության 400-ամյակը տոնելու նախապատրաստական շրջանում Հովհաննես Թումանյանը վերոնշյալ օրաթերթում (21 մայիսի 1913 թ.) շեշտադրում է հայոց ազգային վերածննդի երկու գլխավոր հենասյուները՝ դպրոց և գրականություն: «Ունենալ հարուստ, ապահով դպրոցներ և ուժեղ գրականություն, կնշանակի ամուր ու պատվավոր կանգնել լուսավոր ազգերի շարքում:– Հայտարարում է Հովհ. Թումանյանը և հավելում իր լավատեսական վստահությունը:– Եվ գոնե ես խորապես հավատում եմ հայի էդ կուլտուրական ուժին. մենք կարող ենք էդպես լինել և պետք է լինենք» (7, էջ 57): Ի թիվս այլ փաստարկումների՝ նա վկայակոչում է հրեաների առաջնորդ Մովսեսի մարգարեական խոսքը, որով հալածյալների «չոր ոսկորները մարմին ու շունչ էին առնում», վերածնվում որպես նորոգված ժողովուրդ. «Մեր ժողովրդից էլ, երկար դարերի տառապանքից ու տանջանքից հետո, թեև գրեթե ոսկորն է մնացել ցրված աշխարհքի երեսովը մին, բայց մեր ոսկորն էլ էն ոսկորիցն է, որ ընդունակ է կյանք ու շունչ առնելու ու վերկենալու մարգարեական ձայնի վրա» (7, էջ 57 – 58): Եվ վստահաբար, Հովհաննես Թումանյան գրողն ու հասարակական գործիչը եղավ այն մարգարեներից մեկը, ում կյանքն ու գործը արթուն պահեց հայոց արարիչ ոգին:

1915 թ. Հայոց ցեղասպանությունը Հովհաննես Թումանյանին խորապես ցնցեց, «հայոց դժոխքի» համար նա լիակատար իրավունքով և բացառիկ ուժով դատապարտեց մարդկությանը, «մարդ» կոչվող ճիվաղին. «Եվ մարդն ամաչի գիլից ու շանից // Որ մարդ է ծընվել՝ մարդու նըմանից» (1, էջ 248): Բայց հայ մեծ մտածողին չլքեց հավատն ու վստահությունը հայոց լուսավոր գալիքի հանդեպ: «Ոչ ոք հայ գրողներից այնպիսի ցնցող ուժով չզգաց ու չպատկերեց հայ ժողովրդի ողբերգության խորությունը,– նկատում է Էդվարդ Ջրբաշյանը,– բայց և ոչ ոք այնպիսի մեծ հավատով չերգեց նրա մոտալուտ վերածնությունը»[16]: Այդպես է, հիրավի: Իսկ ի՞նչն էր դրա հիմքում. ոչ թե միամիտ լավատեսությունը, այլ սեփական ազգի պատմության, հոգու և մտքի իմացությունը, «հայ ազգի հզոր ու աննկուն հոգին»: «Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով:– Խոստովանում է Հովհ. Թումանյանը և հարկ համարում մեկնաբանել: – Կենսունակություն էլ որ ասում եմ, ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը» (7, էջ 224 – 225):

Ազգային ինքնաճանաչման և այդ հիմքով ինքնահզորացման հիմնական կռվանը, շարունակ պնդում է Հովհ. Թումանյանը, գրականութ-

[16] **Էդ. Ջրբաշյան**, Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ, էջ 234:

յունն է. դրա մասին նա բազում հրապարակումներ ունի, մասնավորապես՝ «Գրականության ազգային պաշտպանություն պետք է լինի» ծրագրային հոդվածը: Բազում օրինակներ բերելով այլ ժողովուրդների մշակութային զարգացման պատմությունից և դրանում գրողների վճռորոշ դերակատարումից՝ Հովի. Թումանյանը կոչ է անում ազգովի գիտակցել գրողներին աջակցելու անհրաժեշտությունը. «Հայ ժողովուրդն էլ պետք է պարզ հասկանա ու տեր հանդիսանա իր ամենանվիրական ստացվածքին, իր ազգային հանճարին, պետք է ապահովի ու կազմակերպի իր ազգային ոգու արտահայտության ու հզորացման գործը, իսկ թե որտեղից կամ ինչպես, էդ ամենից հեշտն է: Ամենից դժվարը հասկանալն ու կամավորելը, ցանկանալն է» (7, էջ 241): Ավելի հանգամանորեն քննարկելով գրողի և գրական միջավայրի, ինչպես նաև առավել լայն ընդգրկմամբ՝ գրականության և հասարակության փոխհարաբերությունները՝ Հովի. Թումանյանը կատարում է ընդհանուր բնույթի մի շատ կարևոր եզրակացություն. «Գրականություն ունենալու համար ժողովուրդները պետք է ոչինչ չխնայեն, և, նույնիսկ, պաշտպանելու դեպքում էլ լավ իմանան, որ իրենց պահածներից ու պաշտպանածներից տասնից մինն է միջակ գրող դուրս գալու, հարյուրից մինը տաղանդավոր և հազարից մինը հանճարեղ» (7, էջ 244):

Վերջապես, հայոց ազգային ինքնաճանաչման կարևորության շեշտադրումը Հովհաննես Թումանյանի հայացքների շրջանակում երբեք չի հակադրվում համամարդկային խնդիրներին. մյուս ազգերի հետ համերաշխության և համագործակցության գաղափարը կարմիր թելի պես անցնում է նրա դատողություններով: Պերճախոս է վերնագրված «Դեպի մեծ կյանքը» հոդվածը, որտեղ խոսում է «մարդկության ընդհանուր հառաջադիմության գործին», «համամարդկային մեծ խնդիրների» լուծմանը հայերիս արժանավայել մասնակցության մասին: Սեփական ազգի արժանիքների վստահ իմացությամբ է բանաստեղծը հայտարարում. «Եվ մեր բախտավորությունն էն է, որ մենք միանգամայն ընդունակ ենք սրան, ու էստեղ է, որ կարող ենք ասել՝ փոքր ժողովուրդ չենք մենք» (7, էջ 172):

Հայոց հանճարեղ գրողի հրապարակախոսական հայացքները ընդգրկում են բազում երևույթների մասին խորունկ դիտարկումներ: Եվ որքան մեր սերունդները հեռանում են Հովհաննես Թումանյանի ապրած ժամանակաշրջանից, այնքան նրա դատողությունները զարմանալիորեն արդիական են դառնում: Մասնավորապես՝ ամեն անգամ համոզվում ենք, թե որքա՛ն խորն է ըմբռնել Հովի. Թումանյանը հայկականության էությունը, որքա՛ն համակողմանի է վերլուծել հայության բարոյահոգեբանական առանձնահատկությունները և ուղղորդել ազգակիցներին դեպի ազգային ճանաչում և ինքնահզորացում:

Ազգային ինքնաճանաչումը, սեփական առավելությունների և թերությունների պարզաբանումը, դրանց իմացության հիմքով անհատի և

հանրության կյանքի կազմակերպումը այսօր էլ հիմնարար խնդիր է ամեն մի ազգի համար: Ավելին՝ դրա կարևորությունը քսանմեկերորդ դարում ակնհայտորեն առավել սաստկացել է ժամանակակից գլոբալացմանն ուղեկցող մշակութային համահարթեցման վտանգի պայմաններում: Իհարկե, ազգային ինքնաճանաչման բուն հիմնախնդիրը ներկայումս գրողների մենաշնորհը չէ. փիլիսոփաները, սոցիոլոգները, հոգեբանները, կառավարաբանները, քաղաքագետները, նաև պետական ու հասարակական գործիչները սևեռուն ուշադրություն են դարձնում դրան, կան տեսական ուշագրավ աշխատություններ: Հետազոտական շատ կենտրոններ, նաև կուսակցություններ և հասարակական կազմակերպություններ մշակել են գլոբալացման պայմաններում ազգային ինքնության պահպանմանն ու հզորացմանն ուղղված գործնական միջոցառումներ: Այդուհանդերձ, գիտական ճանաչողությունը չի վերացնում գեղարվեստական ճանաչողության կարևորությունը. ազգամշակութային ինքնության պահպանման և զարգացման թեման արդի գեղարվեստական գրականության և արվեստի, հատկապես կինոարվեստի միջոցով հանրային լայն քննարկումների ծիրում է:

Երբ ազգային ինքնաճանաչման խնդիրների ներկայիս ընկալման դիտանկյունից հետահայաց քննարկում ենք Հովհաննես Թումանյանի հայացքները, ապա դրանցում հայտնաբերում ենք բոլոր այն հիմնարար հարցադրումները, որոնց շուրջ կենտրոնացած է ժամանակակից գիտական և գեղարվեստական միտքը: Արդ՝ կարո՞ղ ենք արդյոք անվարան հայտարարել, թե լիովին հաղթահարված է ազգային անինքնաճանաչության «մեծ ցավը»: Հայաստանի հանրային-պետական կյանքում արմատական փոփոխություններից հետո և նոր վերափոխումների շեմին կարո՞ղ ենք արդյոք վստահաբար պատասխանել, թե ի՛նչ ենք մենք՝ որպես ազգային հավաքականություն, որտեղի՛ց ենք գալիս և ո՛ւր ենք գնում: Դեռ ավելին՝ քաղաքացիական-ազգային վերելքի այս շրջանում չէ՞ որ ակնհայտ դարձան երկու ծայրահեղությունները՝ ազգային սնապարծությունը և ազգային ինքնանվաստացումը՝ որպես անխուսափելի հետևանք թերի ինքնաճանաչման և աղճատված ինքնագնահատականի: Եվ արդյո՞ք մեզանում ամեն գործիչ իր տեղում է կամ էլ այնքան սթափ ինքնաճանաչմամբ է օժտված, այնքան ինքնահարգանք ունի, որ պատրաստ լինի սեփական հանրային դերակատարումը զիջելու առավել արժանավոր հայրենակցին: Հայ դպրոցն ու գրականությունը, գիտությունն ու արվեստը արդյո՞ք համահանրային ուշադրության կենտրոնում են և արդյո՞ք լիարժեքորեն ծառայում են ի նպաստ նոր սերունդների հայակրթության...

Ահա թե ինչու հայ մեծ գրողի գրական ժառանգությանն անդրադառնալը, նրա հարցադրումները լիովին ըմբռնելը հույժ կարևորվում են մեր օրերում: Եվ բուն իսկ այդ անդրադարձն ամեն մի հայ ընթերցողի համար ազգային ինքնաճանաչման մի նոր ու հզոր ազդակ է, մի բա-

նալի՝ սեփական ազգամշակութային առանձնահատկությունները հասկանալու և գլոբալացվող աշխարհի իրողություններին հատկապես դրանց ոսպնյակի միջոցով նայելու: Դասական գրողի արտոնությունն է դա՝ հարյուր տարվա իր դատողություններով լույս սփռելու ներկայիս իրողության վրա, իր հանճարի փայլատակումներով օգնելու չորս սերունդ հետո ապրողներիս անձնային և ազգային կեցությունը ճիշտ կարգավորելու: Վստահաբար՝ հայ մարդկանց քառասուն սերունդ էլ անցնի՝ հայ մեծագույն գրողը նրանց կողքին է լինելու՝ թե՛ իր ուրույն թումանյանական ժպիտով, թե՛ իմաստուն խոհերով ու խորհուրդներով:

Բանալի բառեր – *Հովհաննես Թումանյան, ազգային ինքնաճանաչում, ազգային հպարտություն, սթափ ինքնագնահատական, «Ճիշտ մարդը՝ ճիշտ տեղում», դպրոց և գրականություն*

ВАЛЕРИЙ МИРЗОЯН – *Ованес Туманян о национальном самопознании.* – В статье раскрываются взгляды великого армянского писателя на задачи национального самопознания. Нация сильна и способна к самообновлению, если готова трезво выявить и оценить свои преимущества и недостатки. Наоборот, неумение познать свою сущность приводит либо к самолюбованию, либо к самоуничижению. Главное условие адекватной национальной самооценки – хорошее знание собственной истории и культуры, что выдвигает на первый план системообразующую роль художественной литературы. Процветание нации зиждется на двух устоях – школе и литературе; таков завет Ованеса Туманяна.

Ключевые слова: *Ованес Туманян, национальное самопознание, национальная гордость, трезвая самооценка, “правильный человек – на правильном месте”, школа и литература*

VALERI MIRZOYAN – ***Hovhannes Tumanyan on National Self-Identity***. – The article reveals the views of the great Armenian writer Hovhannes Tumanyan on the tasks of the national self-knowledge of Armenians. A nation is strong and capable of self-renewal if it is able to really know its advantages and disadvantages. And, conversely, lack of self-knowledge leads to two extremes – either vanity or self-humiliation. The primary condition for adequate national self-esteem is true knowledge of one’s own history and culture, which highlights the systems organizing role of fiction. The prosperity of the nation is based on two foundations – school and literature – this is the covenant of Hovhannes Tumanyan.

Key words: *Hovhannes Tumanyan, national self-knowledge, national pride, sober self-esteem, “the right man in the right place”, school and literature*

Ներկայացվել է՝ 15.12.2018, գրախոսվել է՝ 28.12.2018, ընդունվել է տպագրության՝ 21.02.2019